ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2771-Ա «23» հուլիսի 2024 թ.

ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.17/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «ԿԱՖԵ 17» ՓԲԸ-ի դիմումը՝ Կենտրոն վարչական շրջանի, Բուզանդի փողոցի հ.17/2 հասցեում գտնվող՝ 129.77քմ մակերեսով հողամասն (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 03.07.2023թ. հ.03072023-01-0118 /գաղտնաբառ՝ CKYXRERMQMHC/ վկայական) ենթավարձակալությամբ «Պաուլաներ» ՍՊԸ-ին տրամադրելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել Երևանի քաղաքապետի 2023 թվականի հունիսի 20-ի հ.1608-Ա որոշումը, դրա հիման վրա 2023 թվականի հունիսի 28-ին կնքված հ.4497 համաձայնագիրը և հողամասի վարձակալության 2017 թվականի նոյեմբերի 1-ի հ.4794 պայմանագիրը:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 620-րդ և 621-րդ հոդվածներով, հաշվի առնելով «ԿԱՖԵ 17» ՓԲԸ-ի դիմումը.

1.Թույլատրել «ԿԱՖԵ 17» ՓԲԸ-ին՝ Կենտրոն վարչական շրջանի, Բուզանդի փողոցի հ.17/2 հասցեում գտնվող, ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրված՝ 129.77քմ մակերեսով հողամասը ենթավարձակալությամբ տրամադրել «Պաուլաներ» ՍՊԸ-ին, մինչև 2029 թվականի օգոստոսի 1-ը ժամկետով (Պետական ռեգիստրի գրանցման համարը 273.110.1064278, ՀՎՀՀ 02694241):

2. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի և Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի վրա:

4. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապի առաջին տեղակալը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ